

նկարագրին մէջ միանձունք արդէն հաւա-  
քուած են եւ աղօթքն ալ մատուցած. այլ  
նստիլ ակմբի եւ կամ բազմոցի վրայ. եւ  
աւելի վերջնոյս, երբ նկատենք որ աշ-  
խարհիկ տաճարաց միւս դիւրութիւնք ալ  
շատ անգամ անպակաս են հոն, ինչպէս  
պիտի տեսնենք: Իմ այս տեսութիւնը, հա-  
ւանական Ե դարուն համար, ստուգու-  
թեան կը փոխուի միջին դարուն, ի տես  
Որբելեանի վկայութեան՝ թէ այլազգիք  
1046 ին « քակեալ յատակեցիւ զգործա-  
տներն եւ զորպէզն մարմնաւոր սեղանոյն »  
Տաթեւոյ ուխտին (230). ուր ակներեւ է  
սեղանի կազմութիւն մը եւ գետնէն բար-  
ձրութիւն մը: Եւ հետեւաբար աղոր հա-  
մեմատական էին բազմոցներն ալ: Բայց  
անոնց նստարանք սովորաբար անզարդ  
են, ունենալով խստամբեր Ս. Ներսեսի  
«ակումբը» միայն՝ առանց բարձի (աստ,  
56): Իրենց միւս սպասներն ալ պէտք է  
որ աղքատիկ լինէին, փայտեայ, կաւեղէն,  
քարեղէն, կամ թէ շատ՝ ապակի (աստ,  
57):

6. — Լուսրի՞ն ընթերցմամբ: — 1284 ի  
զրչ. ժամագրին պակասներէն էր սեղա-  
նորհնէից հրահանգաց բաժինը, որոց մէջ  
կարեւորագոյնն է այն՝ որ կը պատուիրէ  
վանականաց ընթեռնուլ ճաշի ժամանակ.